ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԱԻ - ՄԱԾՁԲ -21/3

(Ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման)

ք. Երևան   "01" փետրվարի 2021թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ալեքսանդր Բազարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Կարկոմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Սարգսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է իրականացնել Պատվիրատուին պատկանող վերանորոգման ենթակա ավտոմեքենաների տեխնիկական սպասարկումը, ընթացիկ և հիմնական նորոգումը:

1.2. Պատվիրատուն պարտավորվում է վճարել կատարված աշխատանքների համար Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում՝ համաձայն Կատարողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի:

1.3. Մատուցված ծառայությունների արժեքը պետք է համապատասխանի Պատվիրատուի՝ սպասարկման ենթակա ավտոմեքենաների ցանկին համապատասխան կազմված մատուցվող ծառայությունների գնացուցակին, որը սահմանվում է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածով:

2. Վճարման պայմանները

2.1. Տեխսպասարկման, ընթացիկ և հիմնական նորոգման աշխատանքների արժեքի վերջնական հաշվարկը ճշտվում է աշխատանքների ավարտից հետո հաշիվ-ապրանքագրի հիման վրա, և նշված գումարը ենթակա է վճարման յուրաքանչյուր մատուցված ծառայությունն ընդունելուց (հաշիվ-ապրանքագիրը ստորագրելուց) հետո 10(տասը) բանկային օրվա ընթացքում: Կատարողի կողմից Պատվիրատուին մատուցված ծառայությունների արժեքը տարվա կտրվածքով չի կարող գերազանցել 970 000 (ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը:

2.2. Կատարողի կողմից ներկայացված էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը (Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ) Պատվիրատուն պարտավոր է հաստատել 5 օրացուցային օրվա ընթացքում: Պատվիրատուի կողմից էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիր (Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ) հաստատելը համարվում է վերջինիս կողմից Կատարողի կողմից կատարված աշխատանքների (մատուցված ծառայությունների) ընդունում:

2.3. Պատվիրատուն էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը (Ապրանքների մատակարարման հարկային հաշիվը) չհաստատելու դեպքում պարտավոր է Պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնել էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը չհաստատելու պատճառները:

2.4. Պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը (Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ) Պատվիրատուի կողմից չհաստատելու և/կամ նույն ժամկետում չհաստատման պատճառը Կատարողին գրավոր կերպով չներկայացնելու դեպքում էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը (Ապրանքների մատակարարման հարկային հաշիվը) համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված, իսկ Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց գումարը ենթակա է վճարման 10 (տասը) բանկային օրվա ընթացքում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն պարտավորվում է՝

3.1.1. Իր ավտոմեքենաների տեխնիկական սպասարկումը և նորոգումը Կատարողի մոտ իրականացնելիս ներկայացնել լիազորագիր՝ պատասխանատու անձի անվամբ.

3.1.2. Ավտոմքեմենաների վերանորոգումից հետո զննել դրանք և ավտոմեքենաների վերանորոգումն իրականացնելուց հետո անսարքության հայտնաբերման դեպքում անմիջապես տեղյակ պահել Կատարողին.

3.1.3. Ընդունել Կատարողի կատարած աշխատանքը և կատարել վճարում Պայմանագրի 2-րդ բաժնում նախատեսված կարգով և ժամկետներում:

3.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.2.1. Կատարողից պահանջելու պատշաճ կերպով մատուցել Պայմանագրով նախատեսված ծառայությունները.

3.2.2. Ցանկացած ժամանակ հրաժարվելու Պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման օրվա դրությամբ Կատարողի կողմից փաստացի մատուցված ծառայությունների արժեքն ամբողջությամբ.

3.3. Կատարողը պարտավորվում է՝

3.3.1. Վերանորոգումը և տեխսպասարկումը կատարել Պատվիրատուի կողմից ներկայացված նախնական հայտի հիման վրա, որում պետք է նշված լինի նորոգման ենթական ավտոտրանսպորտային միջոցը և վերացման ենթակա թերությունները: Նախնական հայտի բացակայության դեպքում կատարվող աշխատանքների ծավալը որոշում է Կատարողը: Նախնական հայտում փոփոխությունների կատարման անհրաժեշտության դեպքում Կատարողը այդ մասին տեղյակ է պահում Պատվիրատուին.

3.2.2. Կազմել նորոգման ներկայացված տրանսպորտային միջոցի հայտնաբերված թերությունների նախնական գնահատման ակտ, որում նշվում են աշխատանքների կատարման բնույթը, ծավալը, արժեքը և ժամկետը: Գնահատման ակտը համարվում է կատարվելիք աշխատանքների փոխադարձ համաձայնագիր:

3.2.3. Վերանորոգման և տեխսպասարկման աշխատանքներն իրականացնել որակով և ժամանակին, իսկ աշխատանքներն անորակ կատարելու դեպքում իր հաշվին և սեղմ ժամկետում վերացնել հայտնաբերված թերությունները:

3.4. Կատարողն իրավունք ունի՝

3.4.1. Պահանջելու Պատվիրատուից վճարել պատշաճ մատուցված ծառայությունների դիմաց.

3.4.2. Պահանջելու Պատվիրատուից տրամադրել ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվությունն ու փաստաթղթերը, իսկ Կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում՝ նաև ավտոպահեստամասերը.

3.4.3. Պատվիրատուին նախապես տեղյակ պահելով երկարաձգելու գնահատման ակտով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը, եթե կատարվող աշխատանքները ծավալուն են և/կամ ի հայտ են եկել Կատարողից չկախված այնպիսի հանգամանքներ, որոնք ազդում են ծառայությունների մատուցման ժամկետների վրա.

3.4.4. Ծառայությունների մատուցմանը ներգրավելու երրորդ անձանց առանց Պատվիրատուի նախնական համաձայնության:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կատարված աշխատանքների արժեքը Պայմանագրի 2-րդ բաժնում սահմանված կարգով և ժամկետներում չվճարելու դեպքում Կատարողն իրավունք ունի յուրաքանչյուր ուշացած օրվա համար Պատվիրատուից պահանջելու տույժի վճարում՝ կատարված աշխատանքների արժեքի 0.5 %-ի չափով:

4.2. Կատարողը պատասխանատվություն է կրում իր կատարած աշխատանքների, ծավալների, որակի և ժամկետների համար: Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի պատվիրատուի լիազորված անձի կողմից ընդունելու պահին կպարզվի, որ աշխատանքները կատարվել են թերություններով, ապա Կատարողը պարտավորվում է սեղմ ժամկետում անհատույց վերացնել թերությունները:

4.3 Կատարողի կողմից պայմանավորված ժամկետում պատվիրված աշխատանքները չկատարելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի յուրաքանչյուր ուշացած օրվա համար պահանջելու տույժի վճարում՝ տվյալ պատվերի արժեքի 0.5 %-ի չափով, բայց ոչ ավել, քան պատվիրված աշխատանքների գումարի չափը:

4.4. Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Պայմանագրի 4.4. կետում նշված տույժի վճարումը, եթե պատվիրված աշխատանքների՝ սահմանված ժամկետում չկատարումը հետևանք է Կատարողի ոչ իրավաչափ գործողությունների:

4.5. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը քաղաքական հուզումները, գործադուլները,

հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի աղդեցությունը շարունակում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Վեճերի լուծման կարգը

5.1. Կողմերից յուրաքանչյուրի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մյուս կողմը գրավոր պահանջ է ներկայացնում իր խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ: Մեկ շաբաթվա ընթացքում բավարարում չստանալու դեպքում կողմը կարող է իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայց ներկայացնել դատարան:

5.2. Կողմերի միջև ծագած այլ տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը ենթակա են լուծման դատական կարգով:

5.3. Կողմերի միջև պայմանագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2021 թ.-ը:

6.2. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը մինչև դրա ժամկետը լրանալը՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ և անցումային դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը և դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները, դրա բաղկացուցիչ մասը կազմող այլ փաստաթղթերը կարող են կնքվել ստորագրությունները թղթային օրինակների վրա դնելու միջոցով, ինչպես նաև մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ ստորագրության այլ նմանօրինակի օգտագործմամբ, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ուղարկված պայմանագիրը ստորագրելու և էլեկտրոնային փոստով վերադարձնելու միջոցով:

7.2. Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավեր լինելու դեպքում, պայմանագրի մնացած դրույթները շարունակում են գործել, եթե դրանց գործողությունը հնարավոր է առանց անվավեր դրույթի: Այդ դեպքում կողմերը պարտավորվում են բարեխղճորեն բանակցել նշված դրույթը վավերական այլ դրույթով փոփոխելու շուրջ՝ մինչ այդ առաջնորդվելով օրենքի համապատասխան նորմերով:

7.3. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են մեկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին: Չտեղեկացման բոլոր բացասական հետևանքները, այդ թվում՝ մյուս կողմի կողմից ուղարկված ծանուցումները չստանալու հետևանքները, կրում է ծանուցման պարտականություն ստանձնած կողմը:

7.4. Պայմանագիրը կազմված է միևնույն իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկ օրինակ:

8. Կողմերի վավերապայմանները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	«Կարկոմ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4	ք. Երևան, Տիգրանյան 1 փակուղի 1
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» Արաբկիր մ/ճ	Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 163058101441	Հ/Հ 220453330395000
ՀՎՀՀ՝ 00011624	ՀՎՀՀ 00141987
Հեռ.՝ 010-23-71-34	Հեռ.՝ 010 24 96 40
ՏՆՕՐԵՆ	ՏՆՕՐԵՆ
_____ Ա. Բազարչյան	_____ Գ. Սարգսյան